ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԱՍՏԱՊԱՏԻՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՆՔ

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ս. Ստեփանոսի Վանքը կը գտնուի Աստապատ գիւղաքաղաքին մօտ, Նախիջևան գաւառին մէջ, այդ պատճառաւ ընդհանրապէս կը կոչուի Աստապատի Վանք։ Ուրիշ անուններով ալ յիշուած է երբեմն, ինչպէս, «Քարատակի Վանք», «Կարմիր Վանք», եւայլն։ Վանքին գլխաւոր սրբութիւնն էր Ս. Ստեփանոսի Աջը. — Հ. Հ. Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Բ., էջ 506, 526։

Աստապատի Վանքին Առաջնորդներէն յիշատակուած են հետեւեալները.

Ա. — Թումայ Եպիսկոպոս, 1605թ, *իր շրջանին Պօղոս Վրդ. Մոկացի կը վերաշինէ Ս. Ստեփանոսի Վանքը՝ ամուր պարիսպով և երկաթապատ դռներով.* — Դաւրիժեցի, Պատմութիւն, 1896, էջ 270։ Ոսկեան, Բ., էջ 510։

Բ. — Յակոբ Բաբուռնապետ Աստապատեցի, 1661–73, «*չինեալ պայծառացոյց ըկբովանդակն, զպարիսպն և զեկեղեցին և զամենայն, զոր ի նմա կան շինուածք*». — Ալիշան, Սիսական, էջ 507։

Գ. — Յովսէփ Արք. Աստապատեցի, 1677–1706, *որդի Աւետիսի և Մարիամի, աշակերտ Աստապատեցի Յակոբ Վարդապետի, տապանագրին մէջ իրեն համար ըսուած է.* «*Նորոգող բարեշինաւոր այսմ ուխտի*». — Ոսկեան, Բ., էջ 512, 517։ Հանդ. Ամս., 1960, էջ 80։

Դ. — Խաչատուր Բաբուռնի, 1709–1711. — Ոսկեան, Բ., էջ 520։

Ե. — Միքայէլ Վարդապետ Աստապատեցի, 1765ին *առաջնորդ կը կարգուի Սիմէոն Կաթողիկոսի կողմէ.* — Ոսկեան, Բ., էջ 524։

Զ. — Դանիէլ Վարդապետ, *Մոյն Առաջնորդը*, 1790ին *Վանահայր կը կարգուի Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի կողմէ.* — Ոսկեան, Բ., էջ 524։

Է. — Նիկողայոս Վարդապետ, 1831, *նորոգել կու տայ եկեղեցւոյ պատերը.* — Ոսկեան, Բ., էջ 525։

Ը. — Յովհաննէս Վարդապետ, 1855. — Սմբատեանց, Երնջակ, էջ 228–9։

Թ. — Յովակիմ Եպս. Տէր Գրիգորեան, 1882. — Ոսկեան, Բ., էջ 525։

Աստապատի Վանքին մէջ գրչագրական գործերով զբաղած են հետեւեալ անձերը.

Ա. — Սահակ Գրիչ, 1578ին *օրինակած է մէկ Աւետարան.* — Երնջակ, էջ 144։

Բ. — Աւետիս Գրիչ, 1661ին *օրինակած է, Վարդան Քահանայի հետ, մէկ Ցաւմատեան, մատեան Սարգսի պատուէրով.* — Երնջակ, էջ 134, 267։

Գ. — Իսահակ Գրիչ, 1676ին *օրինակած է մէկ Աւետարան, որուն յիշատակարանին մէջ կ'ըսէ. «... Քանզի Մի՛ ամաց էի, ուրեք վատացեալ էր ի տեսութենէ, կօղուկով այսքանս յայս բերի»*. — Հանդ. Ամսօրեայ, 1910, էջ 53։

Դ. — Յովհաննէս Աբգ. Շամբեցի, 1678 *ին, Ս. Ստեփանոսի Վանքին մէջ աւարտած է մէկ Բառարան.* — Հ. Ակառեան, Ցուցակ Ձեռ. Թաւրիզի, 1910, էջ 57։

Ե. — Սարգիս Շօռօթեցի, Գրիչ, 1697 *ին օրինակած է բոլորգրով մէկ Փողովածոյ Պատմագրոց, Վանահայր Յովսէփ Վարդապետի յանձնարարութեամբ.* — Հանդ. Ամս., 1960, էջ 75–81։

Զ. — Յովսէփ Վարդապետ, Գրիչ և Վանահայր, *օրինակած է* 1698*ին*,

1. — Պատմութիւն Մ. Խորենացւոյ. — Հանդ. Ամս., 1892, էջ 45։

2. — Բառգիրք Զանազան Գրոց. — Երնջակ, էջ 126։

Է. — Մեսրոպ Աբեղայ, 1738–39, *օրինակած է բոլորգրով Վարդան Վարդապետի Մեկնութիւն Սրգոց Սրգոյն և Մեկնութիւն Հնգամատեանի, և ասոնց եռեւէն Լա. Քառոգներ.* — Ձեռ. Ս. Ց. Թ. 648։

digitised by A.R.A.R.@